ԿԱՐԾԻՔ

Նաիրի Արծրունի Սարգսյանի՝ «Ֆինանսական վերահսկողության իրավական կարգավորման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով ԺԲ.00.02. «Հանրային իրավունք» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված ատենախոսության վերաբերյալ

Նաիրի Արծրունի Սարգսյանի թեկնածուական ատենախոսության թեման արդիական է, քանի որ Հայաստանի ֆինանսական գործունեության ոլորտներում առկա են բազում հիմնախնդիրներ: Հայաստանի հանրապետությունում ֆինանսական վերահսկողության ինստիտուտը դեռևս հեռու է արդյունավետ համարվելուց:

Ատենախոսության թեմայի արդիականությունը պայմանավորված է նաև ՀՀ գործող ֆինանսատնտեսական օրենսդրության բացթողումներով, որի պատճառով ֆինանսական վերահսկողության անկայունությունը և անարդյունավետությունն այսօր ընդլայնում են ֆինանսական իրավախախտումների աշխարհագրությունը, աճում է իրավախախտումների թվաքանակը: Օրակարգում են նաև ֆինանսական պատասխանատվության կարգավորման հիմնախնդիրները:

ՀՀ-ում իրականացող իրավական բարեփոխումները և դրանց արդյունքների հիման վրա ձևավորված իրավական նոր հայեցակարգերը մեծ մասամբ ուղղված են գործող ֆինանսական վերահսկողության և հսկողության իրավական կարգավորման արդյունավետության բարձրացմանը, ինչպես նաև պետության ֆինանսական գործունեության ոլորտում ֆինանսական, հարկային, բանկային, արժութային բնույթի իրավախախտումների կանխմանը:

Ներկա պայմաններում օրակարգի հրատապ հարցերից մեկը բյուջետային կարգապահության և վերահսկողության օրենսդրական ամրագրումն է, որի թերությունները գործնականում զգացնել են տալիս բյուջետային քաղաքականության մշակման և առօրյա իրացման գործընթացներում:

Հեղինակը թեմայի արդիականությունը հիմնավորել է ֆինանսական վերահսկողության կազմակերպման, անցկացման կարգի նորմատիվ-իրավական կարգավորման հիմնախնդրի տեսական և գործնական նշանակությամբ:

Ատենախոսությունը, որպես գիտական հետազոտություն, աչքի է ընկնում ՀՀ ֆինանսական համակարգի զարգացման ժամանակակից փուլի ֆինանսական վերահսկողության նորմատիվ-իրավական կարգավորման խնդիրների համակարգված ուսումնասիրությամբ: Բացահայտվել են հարկային, ֆինանսատնտեսական ստուգումներ անցկացնելու կարգի իրավական կանոնակարգման բացթողումներն ու հակասությունները, ձևակերպվել ու հիմնավորվել են այդ բնագավառում օրենսդրության կատարելագործման ուղղությամբ կատարված առաջարկությունները:

Հեղինակը ատենախոսության մեջ ընդհանրացրել և համակարգել է «ֆինանսական վերահսկողություն» և «հսկողություն» հասկացությունների հիմնական մոտեցումները: Բացահայտվել են «ֆինանսական վերահսկողություն», «ֆինանսական հսկողություն», «հարկային վերահսկողության միջոցառում», «հարկային վերահսկողության ձև» եզրույթների իրավական բովանդակությունը: Ֆինանսական վերահսկողության կազմակերպման արտասահմանյան փորձի վերլուծության հիման վրա առաջարկվել են ՀՀ-ում ֆինանսական գործունեության ստուգումների արդյունավետության բարձրացմանն ուղղված կազմակերպչական միջոցառումներ և պաշտպանության են ներկայացվել ատենախոսության յոթ հիմնական դրույթներ, որոնք հայեցակարգային նշանակություն ունեն ֆինանսական իրավունքի թե՛ գիտության և թե՛ պրակտիկայի համար:

Ատենախոսությունն ունի տեսական և գործնական էական նշանակություն: Ուսումնասիրության ընթացքում կատարված եզրահանգումներն ու դրանց հիման վրա ձևակերպված առաջարկությունները կոչված են ապահովելու ֆինանսական վերահսկողության նորմատիվ-իրավական կանոնակարգման և կատարելագործման գիտական մակարդակի բարձրացումը, նպաստելու ՀՀ ֆինանսական, բյուջետային, հարկային և բանկային օրենսդրության համապատասխան իրավական ակտերի մշակման ժամանակ գիտականորեն հիմնավորված մոտեցման ձևավորմանը: Քննելով ֆինանսական վերահսկողության, նրա սուբյեկտների, ձևերի, տեսակների

և մեթոդների, ստուգումների իրավական և կազմակերպչական ապահովման տեսական-իրավական հարցերը, ինչպես նաև ֆինանսահիրավական նորմերի միասնականացման ու ներդաշնակության հիմնախնդիրները, ատենախոսը բացահայտել է այս բնագավառում Հայաստանի հանրապետությունում ֆինանսական վերահսկողության օրենսդրության կատարելագործման գերակա ուղղությունները:

Անդրադառնալով թեկնածուական ատենախոսության եզրահանգումներին, նկատենք, որ վերջինս ամբողջացնում է ատենախոսության գիտական արժեքը:

Ատենախոսության հեղինակը որոշակի առումով դրսևորել է իրավակիրառ պրակտիկան բարելավելուն, օրենսդրական ակտերում որոշակի փոփոխություններ կատարելուն ուղղված առաջարկություններ մշակելու և ներկայացնելու ունակություն: Այնուամենայնիվ, ատենախոսության առանձին դրույթների վերաբերյալ ստորև ներկայացվում են որոշ դիտողություններ և նկատառումներ, որոնք չեն նսեմացնում թեկնածուական ատենախոսության գիտական արժանիքը:

1. Ատենախոսության եզրահանգումներում հեղինակը առաջարկել է ներդնել հարկվող շրջանառության հասարակական վերահսկողության համակարգ: Հեղինակը համոզված է, որ վերահսկողության այս եղանակը կարելի է դիտարկել, որպես պետական եկամուտների էական ավելացման հնարավորություն: Առաջարկում է իրավական ակտերով ամրագրել և իրավունք վերապահել ապրանքների, ծառայությունների վերջնական սպառողներին հարկային տարվա ավարտից հետո, իրենց սպառումների որոշակի տոկոսի չափով հատկացնել պետական փոխհատուցում, սպառման հիմնավորող փաստաթղթերը հարկային պարմիններին ներկայացնելու դեպքում:

Չվիճարկելով հեղինակի դատողությունները, գտնում ենք, որ նյութն ավելի հարուստ կլիներ, եթե խորապես ուսումնասիրվեր հասարակական վերահսկողության՝ այլ երկրների փորձը:

2. Ֆինանսական վերահսկողության առավել խորը ուսումնասիրությունը ենթադրում է նաև անդրադարձ կատարել ՀՀ Պետական վերահսկողության ծառայությանը, որի վերաբերյալ ատենախոսությունում քիչ է հիշատակվում: Կարծում ենք, անհրաժեշտ

էր նաև ուսումնասիրել ՊՎԾ-ի գործունեությունը, այդ գործունեությունը կարգավորող իրավական ակտերը ու դրանց համատեքստում բացահայտել թեմային առնչվող հարցադրումների հետազոտության սահմանները:

3. Հաշվեքննիչ պալատի վերաբերյալ վերլուծական նյութ ներկայացնելիս պետք է իրավահամեմատության համատեքստում անպայմանորեն անդրադառնար սահմանադրական փոփոխությունների արդյունքին, ընդգծելով ֆինանսական վերահսկողության ոլորտում Հաշվեքննիչ պալատի վերաբերյալ նոր իրավակարգավորումները:

4. Ատենախոսությունում ռուսական աղբյուրների վրա կենտրոնանալով հանդերձ, հեղինակը շրջանցել է Հայաստանի Հանրապետության ԵԱՏՄ-ի անդամ լինելու հանգամանքը, ինչը կկանխորոշեր ֆինանսական վերահսկողության միանգամայն առանձին բաղադրիչների հարստացմանը:

Վերը նշված դիտողություններն, ըստ էության, մասնակի բնույթ են կրում և բնավ չեն արժեզրկում հաջողված ատենախոսության դրույթները:

Ատենախոսությունը և սեղմագիրը պատրաստված են ներկայացվող պահանջ-ներին համապատասխան, հեղինակի կողմից հրապարակված հոդվածներում և մենագիր աշխատությունում լիարժեք արտացոլված են ատենախոսության հիմնական դրույթները:

Նաիրի Արծրունի Սարգսյանի «Ֆինանսական վերահսկողության իրավական կարգավորման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» վերտառությամբ ատենախոսությունն արդիական, տեսական և գործնական նշանակություն ունեցող, ավարտուն, ինքնուրույն ուսումնասիրություն է, որը ներառում է ֆինանսական, հարկային և բանկային իրավունքի տեսության, օրենսդրության, իրավակիրառ պրակտիկայի համար կարևոր նշանակություն ունեցող, ֆինանսական վերահսկողության հիմնախնդիրների վերաբերյալ գիտական հիմնավորված լուծումներ: Նաիրի Արծրունի Սարգսյանի ատենախոսությունը համապատասխանում է Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանա-շնորհման կանոնակարգով սահմանված պահանջներին, իսկ հեղինակը արժանի է ԺԲ.00.02. - «Հանրային իրավունք-սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում»

մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի Պետաիրավական հետազոտությունների բաժնի վարիչ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Հ.Մ. Ստեփանյան

«21» 10 2022թ.

Հ. Մ. Ստեփանյանի ստորագրությունը հաստատում եմ՝
ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի
ինստիտուտի կադրերի բաժնի պետ
Ս.Մ. Աթաբեկովա

«21» 10 2022թ.